ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնք,
Գ.Պտղունք, Հեռ. (093) 133-833, (0231) 6-35-50 ,
ptghunk1@mail.ru

N 86
02.08.2014թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ԱԵՌՈՏ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի ղեկավարի հուլիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 2 էջ:

Հ/Ղ ժ/պ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Պտղունք, (093) 133-833, (0231) 6-35-50, ptghunk1@mail.ru

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

01 հուլիսի 2014թվականի N 13

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՇԱՎԻՐԻ ԱՐԹԵՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158-րդ,159-րդ և 161-րդ հոդվածի երկրորդ մասով.

Կարգադրում եմ.

1.Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավար Կարապետ Արշավիրի Արթենյանին՝ 2014 թվականի հուլիսի 1-ից տրամադրել իրեն հասանելիք 2014 թվականի ամենամյա արձակուրդը՝ 24 (20+4) աշխատանքային օր տևողությամբ:

2.Համայնքի ղեկավար Կարապետ Արթենյանի բացակայության ընթացքում նրա աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Վալերիի Հովհաննիսյանին:

3.Համայնքի ղեկավար Կարապետ Արթենյանին աշխատանքի մեջ համարել 2014 թվականի օգոստոսի 4-ին:

4.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ

20 __ թ. _____
գ.Պտղունք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք համայնք
ՀՀ Արմավիրի մարզ գ.Պտղունք (093) 133-833, (0231) 6-35-50, ptghunk1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիս 2014թվականի N 16

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրաետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Նորոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 7-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 1 որոշումը.

Որոշումեմ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի սեփականատեր՝ Ռազմիկ Ռաֆիկի Բաղդասարյանին պատկանող բնակելի տանը և տնամերձ հողամասին՝ (ծածկագիր 047-021), տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի Երևան-Էջմիածին խճղ. թիվ 29 հասցեն:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/ղ Ժ/պ՝ Ա.Հովհաննիսյան